

Ջրի որակ

Խմելու ջուրն աշխարհում ամենավերահսկվող սննդանյութն է:

Մատակարարված ջրի որակը «Երևան Ջուր» ընկերության թիվ մեկ առաջնահերթությունն է:



Շրջիկ լաբորատորիա

Ամեն օր հատուկ խմբերն աշխատում են տեղերում ջրի որակը ստուգելու, առավել հուսալի դարձնելու, բարելավելու նպատակով:

Լաբորատոր հետազոտություններ

«Երևան Ջուր» ՓԲԸ-ն իրականացնում է 2 տեսակի անալիզներ՝ մանրէաբանական և ֆիզիկաքիմիական:

Ի լրումն պաշտոնական ստուգումների, յուրաքանչյուր շաբաթ ցանցի նմուշառման նույն 100 կետերում, հետազոտվում են 8 չափանիշներ կամ տարեկան 40.000 ստուգված պարամետր: Այս 8 չափանիշները՝ համ, հոտ, գույն, PH, ջերմաստիճան, ազատ և ընդհանուր քլոր, երկաթ, թույլ են տալիս սահմանել հնարավոր անհամապատասխանությունները և ձեռնարկել կանխարգելիչ, շտկման աշխատանքներ՝ մաքրում, քլորացման մակարդակի բարձրացում, ...

Ստուգված 34000 պարամետրերից հայտնաբերվել է ընդամենը 16 անհամապատասխանություն: Այս արդյունքները շատ բարձր են հայկական և միջազգային պահանջներից:

Քլոր

Շատ հաճախ մարդիկ բողոքում են ջրում քլորի համից: Քլորը խմելու ջրի անվտանգության առումով կարևոր տարր է, քանի որ ունակ է ոչնչացնել ջրում առկա մանրէները և նրա մանրէազերծող ազդեցությունը գործում է ողջ ցանցի երկարությամբ:

Ջրում մնացորդային քլորի չափավոր քանակը չի սպառնում առողջությանը, այլ, ընդհակառակը, պաշտպանում է ջուր խմողներին:

Ջրամատակարարման շարունակականություն

Ջրամատակարարման շարունակականությունն ընկերության հիմնական նպատակներից մեկն է: Այն հնարավոր է ապահովել բարձրակարգ և ժամանակակից միջոցներով, սարքավորումներով, ցանցում մեծ շինարարական աշխատանքների, ինչպես նաև թիրախային փոքր գործողությունների իրականացման միջոցով:

Աշխատանքներ

Հուսակորուստները նվազեցնելու և ջրամատակարարման շարունակականության հետագա բարելավման նպատակով անհրաժեշտ է.

- փնտրել և վերացնել հոսակորուստները,
- փոխել շենքերի բակային պոմպերը՝ բարձր հարկերում ջրամատակարարման կայուն շարունակականություն ապահովելու նպատակով,



- փոխել վատ վիճակում գտնվող խմելու ջրի խողովակները...

Մինչև 2007 թ. ավարտն այս աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 1600 մլն ՀՀԴ կամ 4,7 մլն ԱՄՆ դոլար:

Միջոցներ

Ծառայության և շահագործման աշխատանքների որակը բարելավելու նպատակով վերջին 12 ամիսների ընթացքում «Երևան Ջուր» ընկերությունը ձեռք է բերել նոր սարքավորումներ և գործիքներ (հոսակորուստների հայտնաբերման կորելատորներ, բեռնատարներ, էքսկավատորներ, կոմպակտորներ, գրասենյակային և համակարգչային միջոցներ և այլն)՝ 470 մլն ՀՀԴ ընդհանուր արժողությամբ:



Ընդհանուր տեղեկություններ ջրի կենցաղային օգտագործման վերաբերյալ

Ջրի կենցաղային օգտագործումը հիմնականում ներառում է խմելու ջրի սպառումը, լոգանքները, խոհանոցային և սանիտարական սպառումը, կանաչ տարածքների ոռոգումը: Այն կազմում է աշխարհում քաղցրահամ ջրերի օգտագործման մոտ 15% և օգտագործման ծավալները փոփոխական են ըստ երկրների:

Ամերիկացին օրական սպառում է մոտ 600 լիտր, ճապոնացին՝ 300, եվրոպացին՝ 250, իսկ հայը միջինում սպառում է 100 լիտր ջուր, մինչդեռ մաքուր ջրի անհրաժեշտ նվազագույն քանակը մեկ անձի համար օրական 50 լիտր է:



Իմանալ՝ ավելի լավ տնտեսելու համար



Օրական օգտագործված ջրի միայն 7%-ն է ծառայում որպես սննդանյութ: Մնացած 93 %-ն ուղղված է հիգիենայի և կենցաղային այլ կարիքներին:

- Չուգարանի ջրահավաք բաքից անընդհատ հոսքերն ամսական կարող են կազմել 7-10 մ³:
- Ամռանը մեքենաների հաճախակի լվացումներն անհրաժեշտ չեն:



Միրելի հաճախորդ,

Մեկ տարուց ի վեր, «Երևան Զուր» ընկերությունը կառավարում է մայրաքաղաքի խմելու ջրի և ջրահեռացման համակարգերը:

Հաճախորդների հետ որակյալ հարաբերությունները յուրաքանչյուր առևտրային ընկերության հրամայականն է: Մեզ համար կարևոր է, որ «Երևան Զուր» ընկերության հաճախորդները տեղեկացված լինեն ընկերության գործունեության հիմնական ուղղությունների, ինչպես նաև ծրագրերի մասին:

Այս թերթիկի նպատակն է Ձեզ ներկայացնել մեր ծրագրերը և միջոցառումները՝ այսպիսով նպաստելով «Երևան Զուր» ընկերության և իր հաճախորդ-սպառողների միջև փոխվստահության մթնոլորտի ձևավորմանը և փոխշահավետ հարաբերությունների հաստատմանը:


Նպատակ ունենալով բարելավել մեր հարաբերությունները և հեշտացնել ընկերության հետ հաճախորդների կապը՝ այս տարի ընկերությունը ստեղծել է հեռախոսային կենտրոն մեկ ընդհանուր հեռախոսահամարով՝ 1-85:

Հավատացած եղեք, որ «Երևան Զուր» ընկերությունը կհետևի այս տրամաբանությանը Ձեզ ժամանակակից և որակյալ ծառայություններ մատուցելու համար:

Հաճախորդը մեր գործի սրտում է, մենք պարտավոր ենք նրան տալ լավագույնը:

Մերժ Պոպոֆֆ
Գլխավոր տնօրեն

Ձեր մասնաճյուղի սպասարկման տարածքը



«Երևան Զուր» ՓԲԸ

Արովյան 66ա

1-85

office@yerevandjur.am

**Ձեր թերթիկը
Օգոստոս 2007**

№ 1

1-85